Հավելված N 1
«ՀԱՊՀՎՄ-ԷԱԱՊՁԲ-25/4»* ծածկագրով
Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ-ի կողմից «ՀԱՊՀՎՄ-ԷԱԱՊՁԲ-25/4» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 1 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի հանրապետության ռեզիդենտ:
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 02500052
- բանկային հաշվեհամարն է՝ 163004038861
- գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ազատության 24/1
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ corp_tender@telecomarmenia.am
- հեռախոսահամարն է՝ +374 10 700700
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ «Телеком Армения» ОАО

Սույնով «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն հայտարարում և հավաստում է, որ՝

1«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ՀԱՊՀՎՄ-ԷԱԱՊՁԲ-25/4»* ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ -ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ինպատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:
- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, լիազորված անձ՝ Կարեն Ասատուրյան

Signed by: KAREN ASATURYAN 4010830662
Date: Tue, 18 Nov 2025 11:13:09 GMT+04:00

**լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*